Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

# ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

**Հոդված 243. Հայաստանի Հանրապետության ~~բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը~~ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարարությունը**

***(վերնագիրը խմբ. 16.01.24 ՀՕ-45-Ն)***

1. Հայաստանի Հանրապետության ~~բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը~~ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարարությունը քննում է սույն օրենսգրքի 148-րդ, 169.24-րդ և 193.3-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության ~~բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության~~ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարարության աշխատակազմի իրավասու պաշտոնատար անձը:

***(243-րդ հոդվածը խմբ. 14.06.94 ՀՕ-105, 16.01.24 ՀՕ-45-Ն)***